# Արձանագրություն թիվ 2

## ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

30 նոյեմբեր 2019թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 11 անդամները, մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Ց.Դավթյանը, տնօրենի պաշտոնակատար Ա.Հ. Մակարյան, մասնաճյուղի գիտական խորհրդի քարտուղար Մ. Աթոյանը: Հարգելի պատճառներով բացակայում են Լ. Ղալումյանը, Հ. Մխիթարյանը և Տ. Բագամյանը:

## Օրակարգ

1. 2019- 20 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հաստատում: (Զեկուցող՝ Ա. Մարգարյան)
2. 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերի քննարկում և հաստատում: (Զեկուցող՝ Ա. Մարգարյան)
3. 2016-20թթ Ռ.Ծ. –ի կատարման ընթացքի մասին: (Զեկուցող՝ Ա. Մարգարյան)
4. Ընթացիկ հարցեր:

***ԼՍԵՑԻՆ*** - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը: Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

***1.*** Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Ա. Մարգարյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները՝ շեշտելով ընտրության ընթացքը և դժվարությունները: Ա. Մարգարյանը նշեց նաև , որ աշխատանքների ընթացքում էքիզները վերանայելիս կամ նյութի հետ աշխատելիս հնարավոր է թեմաները փոփոխություն, իսկ նրա վերահաստատումը իրականացվում է փետրվար-մարտ ամիսներին: Այս պահին կուրսային և

ավարտական աշխատանքների թեմաները քննարկվել են ուսանողների հետ, իսկ որոշ ուսանողների դեպքում առկա է նաև էսքիզների նախնական տարբերակները:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ*** - Լ. Ֆլջյանը, նշեց որ այս պահին թեմանները քննարկման փուլում են, միայն մեկ ուսանող չի ներկայացել քննարկմանը, որի պատճառով բացակայում է նրա թեման: Տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը նույնպես արտահայտվեց և ներկայացրեց իր հիմնավոր տեսակետները:

***ՈՐՈՇԵՑԻՆ*** -Նոյեմբերի 6-ին ժ. 9$^{00}$-ին հանդիպելով ղեկավարների և ուսանողների հետ վերջնական հաստատել թեմաները և էսքիզները:

***2.*** Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Ա.Մարգարյանը նշեց , որ 2019-20 ուստարվա 1-ին կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքների ժամանակացույցը ըստ նախապես հաստատված գրաֆիկի , որը պետք է իրականացվի դեկտեմբերի 23-ից 28-ը: Այն նախապես տրամադրվել է ուսանողներին, ներկայացվել է ՈւՄՎ՝ ստանալով վերջիններիս համաձայնությունը: Ա.Մարգարյանը դիմելով դասախոսներին առաջարկեց հաստատել առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգարքների ժամանակացույցը:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-*** Համակարծիք լինելով ներկայացված ժամանակացույցի հետ գիտական խորհրդի անդամները առաջարկեցին հաստատել այն:

***ՈՐՈՇԵՑԻՆ-*** Հաստատել առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների ստուգումների գրաֆիկը և հրապարակել մասնաճյուղի կայք-էջում:

***3.*** Օրակարգի երրորդ հարցը Ա.Շ.Մարգարյանը ներկայացրեց ֆակուլտետում ՌԾ-ի իրականացման ընթացքի վերաբերյալ մի քանի ուղղությամբ: Այս հարցը բավականին տարողունակ է և պետք է ժամանակ առ ժամանակ անդրադարձ կատարվի նրան , քանի որ բոլոր գործընթացները միտված են վերջինիս կատարմանը: Զեկուցողը առաջարկեց հարցը քննարկման դրվի հրատապ, քանի որ կան բացթողնված գործողություններ, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել հաջորդ գործընթացները:

Առաջին ուղղությունը վերաբերվում էր դիմորդների հավաքագրման գործընթացին:

Ա.Մարգարյանը ներկայացրեց դիմորդների հետ տարվող աշխատանքները, ընթացքը, մասնավորապես հանրակրթական և արվեստի դպրոցներ կատարված այցելությունները և տեղեկատվության տրամադրումը: Զեկուցողը նշեց , որ ՄԿՊԿ բաժնի կողմից կազմակերպված մարզի դպրոցների այցերի ժամանակ ներկայացվում են ֆակուլտետի մասնագիտությունների մասին տեղեկություններ, սակայն դա բավարար չէ լիարժեք պատկերացնելու մեր մոտ իրականացվող կրթական ծրագրերի ամբողջական բնույթը: Ա. Մարգարյանը ներկայացրեց նաև Հ.Ասատրյանի և Գ.

Ջավրուշյանի մասնակցությամբ արվեստի դպրոցներում իրականացված դասախոսությունների և վարպետաց դասերի, ինչպես նաև նրանց կարևորության մասին՝ դիմորդների հավաքագրման գործընթացում:

ՌԾ հաջորդ կարևորագույն հարցը ԿԾ-երի բովանդակության և նրա իրականացման հարցն է : Զեկուցողը նշեց որ մեր ֆակուլտետում թղթավարությունը անմխիթար վիճակում է , խոսքը վերաբերվում է ամբողջական փաթեթին: Առանձին դասավանդողների առարկայական փաթեթներ համապատասխանում են ներկայացվող պահանջներին, սակայն կան այնպիսիք, որոնք բացակայում են կամ չեն համապատասխանում ԿԾ-ի վերջնարդյունքներին: Շուտով մենք արտաքին փորձաքննություն պետք է ուղարկենք ԿԾ փաթեթը, ինչը այս պարագայում հնարավոր չէ:

Զեկուցողը առաջարկեց սեղմ ժամկետում շտկել բացթողումները և ամբողջական փաթեթը ներկայացնել համապատասխան ամբիոններ:

Մյուս խնդիրը դասախոսների վերապատրաստման ծրագրերի մասնակցության ընդլայնումն է, որը սերտորեն կապված է նախորդ հարցի հետ: Կան դասախոսներ, որոնք մասնակցում և համապատասխան կրեդիտներ են հավաքում, ծանոթանում դասավանդման նորագույն տեխնոլոգիաներին, գրում առարկայական նոր ծրագրեր, օգտագործում էլեկտրոնային ռեսուրսներ և իրազեկվում դասավանդման ժամանակակից մեթոդների մասին:Վերջում Ա. Մարգարյանը նշեց, որ մնացած դասավանդողների մասնակցությունն էլ ավելի կբարձրացնի դասավանդման արդյունավետությունն ու կրթության որակը:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-*** Հ. Ասատրյանը և Գ. Ջավրուշյանը նշեցին, որ պատրաստ են շարունակել վերոնշյալ այցերը դպրոցներ և առաջարկեցին կազմակերպել նաև դիմորդների այցելություններ ֆակուլտետ՝ տեղում ծանոթանալու եղած հնարավորություններին և աշխատանքներին:

***ՈՐՈՇԵՑԻՆ***-1.Դիմորդներին հրավիրել ֆակուլտետ, որպեսզի նրանք ծանոթանան արվեստանոցներում ընթացող բոլոր գործընթացների հետ :

2. Սեղմ ժամկետներում վերացնել թերացումներն ու բացթողումները, վերանայել առարկայական ծրագրերը :

3. Դասավանդողները 2019-20 ուստարվա պլաներում ընդգրկեն նաև մասնաճյուղում իրականացվող վերապատրաստման ծրագրերին իրենց մասնակցությունը:

***4.*** Ընթացիկ հարցերում Ա. Մարգարյանը առաջարկեց ուշադրություն դարձնել դաընթացներում հետազոտական բաղադրիչին, որը կարելի է իրականացնել տնային առաջադրանքների և ինքնուրույն ուսումնասիրության միջոցով:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-*** Լ. Ֆլջյանի կողմից առաջարկվեց վերականգնել(реставрация) ավարտական և կուրսային այն աշխատանքները, որոնք տարբեր պատճառներով վնասվել կամ կորցրել են իրենց նախնական տեսքը:

Ա. Չիբուխչյանը առաջարկեց վերանայել ընդունելության քննության ծրագրերը, քանի որ նախորդ տարի կային որոշ թերություններ և անճշտություններ :

***ՈՐՈՇԵՑԻՆ-*** 1. Հանձնարարել ուսումնական վարպետներին իրականացնել պահոցում առկա կուրսային և ավարտական աշխատանքների վերականգնում(реставрация):

2. Ձևավորել մասնագիտական խումբ՝ ընդունելության քննությունների ծրագրերի վերանայման նպատակով: